12.qxd 09/06/2025 17:24 Page 1

ԳԵՂԱՄԱ ՇԽԱՐՀ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 10 հունիսի 2025թ. թիվ 12 (616)

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 4-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտալ խորհրդի մշակույթի, ժառանգության եւ ապակենտրոնացված համագործակցության հարցերի փոխնախագահ Պատրիկ Կուրտոյին, մշակույթի եւ միջազգային համագործակցության վարչության փոխտնօրեն Ժան-Լյուկ Գայարին, «Ափրատ» տուրիստական կազմակերպության տնօրեն Մարտին Շալինիեին եւ նույն կազմակերպության միջազգային ծրագրերի պատասխանատու Սեբաստիեն Ֆավիեին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի եւ Ֆրանսիայի Հանրապետության Իզերի մարզերի միջեւ կնքված համագործակցության շրջանակներում իրականացված ծրագրերի ընթացքը եւ արդյունքները, ինչպես նաեւ՝ համագործակցության ընդլայնման, առաջիկա անելիքների, նոր ծրագրերի ներդրման հետ կապված հարցերը:

Ողջունելով հյուրերին՝ Կարեն Սարգսյանը շեշտեց, որ Գեղարքունիքի եւ Իզերի մարզերի միջեւ ծավալված տեւական համագործակցությունն արդեն բավական դինամիկ զարգացում է ապրում՝ վերածվելով բարեկամական ու գործընկերային կայուն հարաբերությունների:

-Այն բոլոր ծրագրերը, որոնք մենք միասին նախանշել ու ընդունել ենք, իրականացվել կամ իրականացվում են սահմանված ժամկետների մեջ՝ գրանցելով տեսանելի արդյունքներ: Եվ այստեղ նկատելի են մեր ֆրանսիացի գործընկերների ներդրած ջանքերը,-ն-շեց մարզպետը:

Պատրիկ Կուրտոն իր հերթին գոհունակություն հայտնեց Գեղարքունիք-Իզեր համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի ընթացքից եւ արդյունքներից, կարծիք հայտնելով, որ կողմերը կարող են ընդլայնել համագործակցության շրջանակները եւ ներդրվող ծրագրերի ծավալները, ավելի արդյունավետ աշխատանքներ իրականացնել այլ ոլորտներում:

-Շատ ցանկալի է, որ համագործակցությունը ծավալվի համայնքների մակարդակով, եւ այդ ծրագրերում ընդգրկվեն Գեղարքունիքի մարզի բոլոր համայնքները, ու մենք այս ուղղությամբ աշխատելու ենք համատեղ եւ նույնպես հասնելու ենք ցանկալի արդյունքների,- նշեց Պատրիկ Կուրտոն:

Կարեն Սարգսյանն էլ իր հերթին տեղեկացրեց, որ արդեն իր իսկ նախաձեռնությամբ, համագործակցության շրջանակներում ստեղծվել է գյուղատնտեսական հարցերի հանձնաժողով, որը կմշակի Գեղարքունիքի մարզի գյուղոլորտում ծրագրերի ներդրման եւ իրականացման ուղղությունները եւ հայեցակարգը: Մարզպետը միաժամանակ առաջարկեց՝ ֆրանսիական կողմի հետ համատեղ ճանաչողական այց կազմակերպել մարզի ջերմոցային տնտեսություններ, որոնք թեեւ հիմնվել են վերջին տարիներին, սակայն ծավալման ու զարգացման համար բավականին կայուն հիմքեր են ստեղծել:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԵՐՏԱԳՐՄԱՆ ՍԱՐՔՈՎ

Գավառի բժշկական կենտրոնը համալրվել է համակարգչային շերտագրման սարքով:

Գավառի ԲԿ համակարգչային շերտագրման կաբինետի հիմնումն իրականացվել է ՀՀ Վարչապետի խոստման արդյունքում:

Շինարարական աշխատանքներն իրականացվել են ԲԿ-ի տնտեսված միջոցների հաշվին, շուրջ 10 միլիոն դրամի շրջանակներում, իսկ համակարգչային շերտագրման սարքը տեղադրվել է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրամադրված միջոցներով՝150 միլիոն դրամ նախահաշվային արժեքով:

Համակարգչային շերտագրման կաբինետի գործարկմամբ Գավառի բժշկական կենտրոնը հնարավորություն կունենա՝ համայնքի բնակիչներին մատուցելու որակյալ ծառայություն՝ տեղում իրականացնելով ճշգրիտ հետազոտություն, ախտորոշում եւ բուժում:

Այս նախաձեռնությունը կնպաստի նաեւ ԲԿ սեփական միջոցների ավելացմանը, ինչի արդյունքում էլ բժշկական կենտրոնը կվերազինվի ժամանակակից այլ սարքավորումներով:

Մայիսի 29-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանն աշխատանքային այց է կատարել Գավառի բժշկական կենտրոն՝ համակարգչային շերտագրման կաբինետի հիմնման եւ համապատասխան սարքավորման տեղադրման աշխատանքները դիտարկելու նպատակով:

Մայիսի 30-ին Գավառի ԲԿ է այցելել ՀՀ Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը՝ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հետ մասնակցելով համակարգչային շերտագրման կաբինետի բացման արարողությանը:

ՄԵԼԻՔ ԹԱՆԳԻԻ ԿԱՄՈՒՐՋՆ ՈՒ ՈՐՈՏՆԱԲԵՐԴԸ

Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման օրը «Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաքուլ Տոնոյանի հետ ձեռնարկում ենք հերթական ուխտագնացությունը դեպի Հայաստան աշխարհի սրբազան վայրեր, դեպի հայկականության ակունքներ, որոնք հազարամյակներով սնուցել են մեր ժողովրդի միտքը, հոգեկերտվածքը, մաքառման ու արարման ձգտումները:

Ուխտագնացություն ենք ձեռնարկում դեպի Սյունյաց աշխարհ, ուր ամեն մի շեն, ամեն մի լեռ, ամեն մի բերդ ու ամրոց, բնության ամեն մի անկյուն շաղկապված են Հայոց հնօրյա ու նորօրյա պատմությանը, վերելքներին ու անկումներին, հերոսական ու ողբերգական ժամանակներին, վերջապես՝ արքայական ու իշխանական տոհմերին, ազգային հզոր ոգուն, բնական կամ ձեռակերտ սքանչելի հուշարձաններին:

Մենք գնում ենք Սիսակ Նահապետի երկիր, որը մեզ ավանդվել է մեր հեռավոր նախնու կողմից՝ որպես հրաշագեղ բնություն ունեցող, սակայն անառիկ մի լեռնաստան, որից պետք է զարհուրի ամեն մի թշնամական ուժ՝ այն գրավելու փորձ անելուց առաջ: Մենք գնում ենք Անդոկ իշխանի երկիր, որտեղ շատ անգամներ են նվաճող բանակները բախվել անառիկ ամրոցների ու սոսկալի հարվածների: Մենք գնում ենք Դավիթ Բեկի երկիր, որտեղ Հայոց գահերեց զորավարը խիզախորեն ազատության դրոշ էր պարզել ավարառու ցեղերի ու հայասպան տերությունների դեմ: Մենք գնում ենք Անդրանիկ Օզանյանի ու Գարեգին Նժդեհի գլխավորած քաջերի երկիր, որտեղ ավելի քան մեկ դար առաջ թրքաբոլշեւիկյան հորդաների դեմ կենաց-մահու պայքարի էին ելել սյունյաց քաջարի մարտիկները՝ արյունարբու նվաճողների երախից փրկելու մեր հայրենիքի ողնաշար համարվող հարավային հատվածը: Եվ այդ մաքառման շնորհիվ է, որ Սյունիքը կարողացավ մնալ հայկական, որ այժմ ուխտագնացության ենք գնում Տիրո՛ջ, այլ ոչ թե հյուրի ու կորուսյալի կարգավիճակով:



Լուսաբացը դիմավորում ենք Վայոց Ձորի մարզում, իսկ արեւածագից առաջ արդեն ուխտագնավության առաջին կանգառը կատարում ենք Որոտնավան գյուղում՝ Մելիք Թանգիի կամրջի մոտ: Տպավորիչ է թե՛ կամրջի ճարտարապետական տեսքը, թե՛ դիմացից վեր խոյացող ժայռերը՝ քարերի սքանչելի սիմֆոնիաներով, թե՛ կամրջի տակով շաչյունով վազող Որոտան գետը:

Կամարակապ կամրջի արեւմտյան պատին թողած արձանագրությունից տեղեկանում ենք, որ Մելիք Թանգիի կամուրջը կառուցվել է 1855 թվականին, Սիսիան գավառի կառավարիչ Մելիք Թանգի 2-րդի կողմից՝ Տաթեւ տանող ճանապարհը բարեկարգելիս: Մելիք Թանգյանները, ըստ որոշ աղբյուրների, Բռնակոթ բնակության են եկել Անիից: Տոհմի նախահայրը Մելիք Ստեփանն էր՝ Անիում զորապետության աստիճանի հասած: Միաթռիչք այս կամուրջը շահագործվում է մինչ օրս՝ իրար կապելով Որոտան գետի երկու ափերը: Այն ունի 25 մետր երկարություն:

/շարունակությունը՝ էջ 4-ում/

12.qxd 09/06/2025 17:24 Page 2

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ՇՈՒՔՈՎ ՆՇՎԵԼ Է ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Գեղարքունիքի մարզի համայնքներում բազմաբնույթ միջոցառումներով է նշվել Երեխաների պաշտպանության միջազգային օրը:

Սեւանում միջոցառումներն անցկացվել են Ս. Զաքարյանի անվան մշակույթի կենտրոնի դիմացի հրապարակում:

Ելույթ են ունեցել Սեւանի թիվ 1 «Բողբոջ», թիվ 2 «Զարթոնք», թիվ 3 «Հեքիաթ», թիվ 4 «Գալիք» մանկապարտեզների, Սեւանի համայնքային մշակութային կենտրոնի «Սեւան», «Հայանե» պարային համույթների եւ «Վահագն» երգի խմբի սաները:

Երեխաների մասնակցությամբ իրականացվել են խաղեր, նկարչություն եւ կավճանկարչություն:

Հայկական Կարմիր Խաչի կողմից երեխաներին բաժանվել են պաղպաղակներ եւ փոքրիկ նվերներ:

Օրվա տրամադրությունները շարունակվել են երեկոյան, Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատի դահլիճում:

Սեւանի համայնքապետարանի հովանավորությամբ փոքրիկներին հյուրընկալվել է Երեւանյան կրկեսը: Ծրագրում հանդես են եկել ծաղրածուներ, աճպարարներ, ակրոբատներ:

Օրվա ընթացքում երեխաներին հետաքրքիր եւ անսպասելի անակնկալներ են մատուցվել տարբեր կազմակերպությունների կողմից:

Հունիսմեկյան միջոցառումները շարունակվել են ողջ օրվա ընթացքում:

Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ Մարտունու մանկական արվեստի դպրոցի բակում կազմակերպվել է դպրոցի սաների նկարչական աշխատանքների ցուցահանդես, «Կարմիր գլխարկ» հեքիաթի մոտիվներով տիկնիկային ներկայացում եւ համերգային ծրագիր, որի ընթացքում հանդես են եկել «Ավետյաց» պարային համույթի եւ Մարտունու երաժշտական դպրոցի սաները:

Տարբեր անվանակարգերում հաղթող երեխաները ժյուրիի կողմից ստացել են մրցանակներ, որոնք տրամադրել է Մարտունու համայնքապետարանը:

Վարդենիսում երեխաների պաշտպանության միջազգային օրվա առիթով Գառնիկ Կարապետյանի անվան զբոսայգում Վարդենիսի համայնքապետարանի եւ «Սոս - Արեւելք քրիստոնեաներ» կազմակերպության համատեղ նախաձեռնությամբ անցկացվել է մեծածավալ եւ բազմաբովանդակ միջոցառում: Մանուկներին իր օրհնությունն է տվել Հայ առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի Վարդենիսի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Հարություն քահանա Հունանյանը: Երեխաներին ողջունել եւ իր շնորհավորանքի խոսքն է հղել համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Միջոցառումը մեկնարկել է համայնքի շնորհալի երեխաների տոնական համերգով: Զբոսայգու տարբեր անկյուններում երեխաներին մատուցվել են անակնկալներ, զվարճալի խաղեր: Մարզադպրոցների սաները հանդես են եկել սպորտային խաղերով ու ցուցադրական համարներով: Լավագույն մարզիկներն արժանացել են նվերների: Միջոցառմանը ներկայացվել է նաեւ Վարդենիսի գեղարվեստի դպրոցի սաների մանկական կտավների ցուցահանդեսը: Լավագույն նկարների հեղինակները եւս արժանանացել են մրցանակների: Սիրողական շախմատի մրցույթն անցկացվել է երկու տարիքային խմբերում՝ խթանելով երեխաների մտավոր մրցակցությունը: Արհեստավարժ անիմատորներն անցկացրել են թիմային խաղեր, դինամիկ մրցույթներ՝ տարբեր տարիքային խմբերի համար:

Պղպջակների շոուն, փրփուր փարթին, սիրված մուլտհերոսների այցը եւ պաղպաղակի հյուրասիրությունը դարձել են օրվա ամենասիրված պահերը: Միջոցառումն ամփոփվել է Վարդենիսի Մհեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատում, որտեղ երեխաները մասնակից են եղել մանկական կրկեսային ներկայացմանը:

Երեխաների պաշտպանության միջազգային օրը Գավառում մեկնարկել է համայնքի մշակութային հաստատությունների սաների համերգային ծրագրով, որից հետո Երեւանից հրավիրված կրկեսային շոուն ապահովել է նրանց մանկական հետաքրքրությունները, ծաղրածուն փոքրիկների հետ երգել է, պարել եւ նրանց ներգրավվել խաղերի մեջ, իսկ կենդանիների եւ մուլտհերոսների՝ բեմում հայտնվելը փոքրիկների ամենասպասված անակնկալներ են եղել: Հունիսմեկյան միջոցառումը ներառել է նաեւ զվարճություններով լի փրփուր-շոուն, որը երեխաների ամենասիրելի ու սպասված զվարճանքներից մեկն է եղել:

«Թամարա» ՍՊԸ հիմնադիր Աշոտ Դովլաթյանի կողմից միջոցառման մասնակից բոլոր երեխաներին պաղպաղակ է հյուրասիրվել:

Տոնական միջոցառումներ են անցկացվել նաեւ Ճամբարակ համայնքում: Համայնքապետարանի բակում հանդես են եկել համայնքի մշակութային հաստատությունների շնորհալի սաները, երգի ու պարի խմբերը, որոնց կատարումներն ուղեկցվել են մրցանակաբաշխությամբ: Ճամբարակցի փոքրիկները զվարճացել են մայրաքաղաքից ժամանած կրկեսային ծրագրի շնորհիվ: Անցկացվել է նկարչական աշխատանքների ցուցադրություն, կավճանկարչության մրցույթ, պաղպաղակի հյուրասիրություն:

«Գեղամա աշխարհ»

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

/սկիզբը՝ էջ 1-ում/

«Աֆրատ» կազմակերպության ներկայացուցիչ Սեբաստիեն Ֆավիեն ներկայացրեց տուրիզմի ոլորտում իրականացված ծրագրերի ընթացքը եւ արդյունքները, նախատեսվող ծրագրերի ներդրման առաջնահերթությունները, որտեղ առաջնակարգ նշանակություն է ձեռք բերում քայլարշավային տուրիզմի զարգացումը:

Տուրիզմի ոլորտում իրականացված ծրագրերի շրջանակներում նախորդ տարվա ընթացքում Գավառում իրականացվել է հայ-ֆրանսիական քայլարշավային փառատոն, կատարվել քայլարշավային երկու արահետների նշագծման աշխատանքներ, որոնցից մեկը՝ Սեւան քաղաքում, մյուսը՝ Գավառ համայնքի Նորատուս գյուղում: Յուրաքանչյուր արահետի նշագծման ու կահավորման համար ներդրվելու է 35 հազար եվրո դրամաշնորհ: Ծրագրի շրջանակներում իրականացվում են նաեւ Գիդերի վերապատրաստումներ: Քայլարշավային տուրիզմի զարգացման նպատակով ծրագրերում ընդգրկվում են Գեղարքունիքի մարզի երիտասարդական կազմակերպություններ, ինչպես նաեւ՝ ոլորտում մեծ փորձ ունեցող ֆրանսիացի կամավորներ:

2025 թվականին նախատեսվում է Գեղարքունիքի մարզում նշագծել եւս երկու արահետ, որոնցից մեկը դառնալու է Արմաղան լեռան գագաթ տանող արահետը:

Մարզպետ Կարեն Սարգսյանն առաջարկեց՝ քայլարշավային տուրիզմի ոլորտում նախատեսվող ծրագրերն իրականացնել Գեղարքունիքի մարզի համայնքապետարանների համաֆինանսավորմամբ, որպեսզի դրանք լինեն ավելի նպատակային, արդյունավետ եւ համայնքներին շահագրգռող:

-Մենք կանենք հնարավորը, որպեսզի Գեղարքունիքի մարզը բոլոր երկրների զբոսաշրջության սիրահարների համար դառնա կարեւոր տուրիստական ուղղություն, այդ նպատակով էլ ձգտելու ենք ապահովել բավար ու որոշակի տուրիստական հոսքեր: Նույնքան համոզված եմ, որ մեր համատեղ ջանքերն այս դեպքում էլ կպսակվեն հաջողությամբ,-նշեց Սեբաստիեն Ֆավիեն:

Հանդիպման ավարտին կողմերը քննարկեցին համագործակցության ծրագրերի հետ կապված այլ հարցեր:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓՈՒՆՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ Է ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արփունք գյուղում ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում 2025 թվականի մարտ ամսից մեկնարկել եւ ընթանում են 144 տեղանոց, արդի չափորոշիչներին համապատասխան կրթահամալիրի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, կրթահամալիրը կառուցվում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ, ՀՀ պետբյուջեի միջոցներով: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 251 միլիոն 258 հազար դրամ:

Կրթահամալիրը սպասարկելու է Վարդենիս համայնքի Արփունք եւ Ավազան գյուղի դպրոցական եւ նախադպրոցական տարիքի երեխաներին:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Սթրոնգ Բիլդեր» ՍՊԸ-ն:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 2027 թվականի փետրվարին:

«Գեղամա աշխարհ»

ՄԻՋԻՆ ՆՈՐՈԳՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ՍԵՎԱՆ-ՄԱՐՏՈՒՆԻ-ՎԱՐԴԵՆԻՍ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ԼՃԱՇԵՆԻ ՀԱՏՎԱԾԸ

Արդեն մի քանի օր է, ինչ Սեւան-Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհի Լճաշենի հատվածում սկսվել եւ ընթանում են միջին նորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 91 միլիոն 500 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է պետբյուջեի միջոցներից: Ճանապարհը միջին նորոգման է ենթարկվում 2,5 կիլոմետր երկարությամբ եւ 18108 քառակուսի մետր մակերեսով: Շինաշխատանքներն իրականացնում է «Ճանապարհ» ՍՊԸ-ն:

Կապալառու կազմակերպության կողմից կատարվել են փոսային նորոգման աշխատանքներ, տեղադրվել է հարթեցնող շերտ, այժմ իրականացվում է ասֆալտբետոնե ծածկի տեղադրումը: Ասֆալտապատումից հետո կկատարվի կողնակների հարթեցում, ուղղորդիչ սյուների տեղադրում: Աշխատանքները կավարտվեն առաջիկա օրերի ընթացքում:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻՆ ԾՆՎԵԼ Է 76 ԵՐԵԽԱ

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում 2025 թվականի մայիսին ծնվել է 76 երեխա՝ 43 տղա, 33 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության եւ սոցիալական հարցերի վարչությունից, 30 երեխա լույս աշխարհ է եկել Մարտունու ծննդատանը, 25 երեխա՝ Սեւանի, 11 երեխա՝ Վարդենիսի, 6 երեխա՝ Գավառի բժշկական կենտրոններում, 4 երեխա՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2024 թվականի մայիսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 108 երեխա:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐ Է ՄՆՈՒՄ 18 ՍԱՆՏԻՄԵՏՐՈՎ

Սեւանա լճի մակարդակը 2025 թվականի հունիսի 9-ին ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 77 սանտիմետր բարձրության վրա, ինչը 18 սանտիմետրով բարձր է մնում նախորդ տարվա նույն օրվա գրանցված նիշից:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի համաձայն՝ 2025 թվականի առաջին հինգ ամիսների ընթացքում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւանա լիճ է տեղափոխվել 89 միլիոն 860 հազար խորանարդ մետր ջուր: Սեւանա լիճ թափվող առանձին գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում:

Ոռոգման նպատակներով Սեւանա լճից առայժմ բաց է թողնվել 1 միլիոն 890 հազար խմ ջուր:

12.qxd 09/06/2025 17:24 Page 3

ԲԱՑՎԵՑ ԵՎ ՕԾՎԵՑ ՄԱԴԻՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մադինա գյուղում հունիսի 1-ին օծվեց եւ բացվեց նորակառույց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին՝ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Պարթեւ եպիսկոպոս Բարսեղյանի եւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանի ձեռամբ եւ հոգեւոր դասի աղոթակցությամբ:

Եկեղեցին կառուցվել է Մադինա գյուղի նախկին բնակիչ, ռուսաստանաբնակ գործարար Միեր Բաղդասարյանի բարերարությամբ եւ Ռաֆիկ Հերգնյանի ճարտարապետությամբ:

Օծման կարգին ներկա էին նաեւ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Գեղարքունիքի նախկին մարզպետ, ՀՀ ՏԿԵ նախկին նախարար Գնել Սանոսյանը, ՀՀ ԶՈՒ 2-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ-մայոր Գարեգին Պողոսյանը, Մարտունի համայնքի ղեկավար Հովիկ Հովեյանը, Գեղարքունիքի մարզպետի եւ Մարտունու համայնքապետարանի աշխատակազմերի, մարզային եւ համայնքային ուժային կառույցների ներկայացուցիչներ, հյուրեր:

Սրբազան արարողության ավարտին ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ բարերար Միեր Բաղդասարյանին հղված «Օրհնության գիր»-ը: Օծման կարգից հետո ներկաներին ողջույնի եւ շնորհավորանքի խոսքեր հղեցին Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Պարթեւ եպիսկոպոս Բարսեղյանը, Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Մարտունի համայնքի ղեկավար Հովիկ Հովեյանը, Մադինայի վարչական ղեկավար Հարություն Հայրապետյանը, բարերար Միեր Բաղդասարյանը:

Գեղարքունյաց թեմի առաջնորդն իր հայրական օրհնությունը փոխանցեց Մադինա գյուղի բնակիչներին՝ մաղթելով զորանալ Տիրոջ օրհնաբեր շնորհներով եւ ամուր հավատի ու միասնականության շնորհիվ շեն պահել, ինչպես նաեւ՝ իրենց մշտական ներկայությամբ շունչ եւ ոգի հաղորդել Սուրբ Ամենափրկիչ հրաշակերտ եկեղեցուն:

-Այսօր մենք միասին ականատեսն ու մասնակիցն ենք դառնում մի այնպիսի կարեւորագույն իրադարձության, որին այս գյուղի բնակիչները սպասել են երկար տարիներ, սերնդեսերունդ երազել նման շքեղ հավատի տուն ունենալու մասին: Այս գյուղի տարածքում պահպանված են մեր ժողովրդի արարչագործ մտքի ու ջանքերի շնորհիվ կերտված պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ, որոնք մեզ են հասել հազարամյակների հեռվից:Եվ դրանցից յուրաքանչյուրն այս սրբազան հողի վրա հաստատուն կերպով է դրել հայկականության անջնջելի կնիքը: Իսկ Սուրբ Ամենափրկիչ նորաբաց եկեղեցին իր վեհաշուք տեսքով գալիս է միանալու Հայոց սրբազան ու ազգային հավատի աղոթաշունչ զորության հազարամյակների երթին, լրացնելու մեր հողի վրա պահպանված ու մեզ ավանդված պատմաճարտարապետական հրաշակերտ կոթողների փառքն ու դարերին պահ տրվող հոգեւոր-մշակութային արժեքների շարքը: Նրանով մեր հոգիներում էլ ավելի կամրապնդվի հայրենի հավատը, նոր շունչ կառնի Աստվածառաք աղոթքը, հայեցի բառն ու բանը, ազգապահպան քարոզն ու գործը մեր հայրենի

բնության այս սքանչելի անկյունում:

Սուրբ Առաքելոցի բացմանն ու օծմանը փոխլրացնելու է եկել եւս մեկ կարեւոր իրադարձություն ու հայրենաշեն ձեռնարկ՝ Մադինայի կրթահամալիրի կառուցումը, որն արդն մեկ տարի է, ինչ սկսվել եւ ընթանում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում: Ու հեռու չէ այն ժամանակը, երբ նորակառույց, արդի չափորոշիչներին համապատասխան կրթահամալիրն իր դռները կբացի գյուղի դպրոցական ու նախադպրոցական տարիքի երեխաների առջեւ,-ներկաներին դիմեց Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը:

-Այսուհետ 2025 թվականի հունիսի 1-ն այս գյուղի տարեգրության մեջ հիշվելու է որպես նորակառույց Սուրբ Առաքելոց եկեղեցու օծման ու բացման օր, ազգային ուխտի ու վերազարթոնքի անկրկնելի օր:

Հավատի այսպիսի շքեղ տան կառուցումը, օծման ու բացման այս արարողությունը ուղիղ ու արժանի պատասխանն են մեր սրբազան հողը դարեր շարունակ ասպատակելու եկած, Հայոց հայրենիքն ավերակների վերածած նվաճողների չար ու անիծյալ գործերին: Ահա այսպես ենք մենք նրանց բերած արհավիրքների դեմ մաքառել, տոկացել, մեր մեջ վերստին ուժ գտել, ծլարձակել մոխիրների միջից, վերագտել ապրելու մեր կամքը եւ արարելու եռանդը:

Շուրջ մեկ դար առաջ մեծ ջանքերի գնով այս գյուղը վերակերտած ու վերահայացրած մարդիկ մեզ այսօր թողել են բազմամարդ ու գեղեցիկ մի շեն՝ իր առանձնատներով, մշակված հողամասերով ու այգիներով, դպրոցով ու մշակույթի տնով, բարեկարգ փողոցներով, գործող ենթակառուցվածքներով, արարող ու կենսասեր մարդկանցով:

Մադինան վերջին տարիներին ծաղկում ու զարգանում է ոչ միայն իր զավակների ջանքերով ու կառուցող ձեռքերով, այլ նաեւ հայրենի կառավարության ամենագործուն աջակցությամբ, որն արտահայտվում է արդի չափորոշիչներին համապատասխան կրթահամալիրի, ոռոգման եւ խմելու ջրատարների, արտաքին լուսավորության ցանցի կառուցմամբ, ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգմամբ, այլ ձեռնարկներով:

Իսկ Սուրբ Ամանափրկիչ եկեղեցու կառուցումը, բացումն ու օծումը ոչ միայն նորոգելու եւ ամրապնդելու է մեր հավատն ու ինքնությունը, այլ նաեւ ոգեշնչելու է բոլորիս՝ մեր հայրենի տունը միշտ շեն ու ծաղկուն պահելու, մեր սրբազան հող ու ջրին առհավետ կապվելու համար,-նշեց Մարտունի համայնքի ղեկավար Հովիկ Հովեյանը՝ ելույթի ավարտին Մարտունու համայնքապետարանի շնորհակալագրով պարգեւատրելով բարերար Միեր Բաղդասարյանին:

Մադինայի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին կենտրոնագմբեթ է ու խաչաթեւ, 17 մետր բարձրությամբ, 7,5 մետր լայնությամբ եւ 12 մետր երկարությամբ:

Այն Մադինա բնակավայրի միակ ու առաջին օծված եկեղեցին է:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԵՐՈՍ-ՔԱՂԱՔ ՆՈՎՈՌՈՍԻՅՍԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Գավառ- Նովոռոսիյսկ եղբայր քաղաքների համագործակցության շրջանակներում Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանն ընդունել է Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի Հերոս-քաղաք Նովոռոսիյսկի պաշտոնական պատվիրակությանը՝ քաղաքապետ Անդրեյ Կրավչենկոյի գլխավորությամբ:

Ինչպես տեղեկացրին Գավառի համայնքապետարանի աշխատակազմից, պատվիրակության կազմում էին Նովոռոսիյսկ քաղաքի հայկական ազգային մշակութային «Լույս» հասարակական կազմակերպության նախագահ, Կուբանի աշխատանքի հերոս, Կրասնոդարի երկրամասի հասարակական պալատի անդամ Վլադիմիր Մխիթարյանը, ՌԴ Կրասնոդարի երկրամասի՝ «Ռուսաստանում հայերի միության» համառուսական հասարակական կազմակերպության շրջանային բաժանմունքի նախագահի տեղակալ Գեորգի Պողոսովը, պաշտոնատար այլ անձինք:

Համայնքապետարանում պատվիրակությանը աղ ու հացով դիմավորելուց հետո համայնքի ղեկավարն իր աշխատասենյակում անվանական արծաթե հուշամեդալներ է հանձնել Անդրեյ Կրավչենկոյին, Վլադիմիր Մխիթարյանին եւ Գեորգի Պողոսովին:

Անդրեյ Կրավչենկոն իր հերթին Գուրգեն Մարտիրոսյանին է փոխանցել խորհրդանշական հուշաններ:

Կողմերը քննարկել են բարեկամ քաղաքների հետագա համագործակցության հարցեր:

Գուրգեն Մարտիրոսյանը եւ Անդրեյ Կրավչենկոն շրջել են Գավառ քաղաքում, ծանոթացել քաղաքի պատմությունը խորհրդանշող պատմամշակութային արժեքներին:

Այնուհետեւ Գավառի Սամվել Քոչարյանցի պուրակում տեղի է ունեցել Նովոռոսիյսկ քաղաքի հիմնադիրներից մեկի՝ Լազար Մարկոսի Սերեբրյակովի հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը: Վերջինս ծագումով հայ է, ռուսական նավատորմի ծովակալ, մեծ է նրա ներդրումը Սեւծովյան նավատորմի եւ քաղաքաշինության զարգացման գործում:

Հուշատախտակի բացման արարողությունն ուղեկցվել է ելույթներով, որոնցում ընդգծվել են Գավառ-Նովոռոսիյսկ եղբայր քաղաքների բարեկամական հարաբերությունները՝ հայ-ռուսական գործակցության համատեքստում: Ի նշան երկու քաղաքների բարեկամության՝ պուրակում նաեւ ծառ է տնկվել:

Այցելություն է կատարվել նաեւ Գավառ համայնքի Հայրենական Մեծ պատերազմի միակ վետերան, սարուխանցի 103-ամյա Մեխակ Ավետիսյանին:

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում արդեն շուրջ երկու ամիս է, ինչ սկսվել եւ ընթանում են ճանապարհաշինական աշխատանքներ ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Ծրագրի առաջին փուլի՝ Սեւան քաղաքի շուրջ մեկնարկել է Իսահակյան, Օրբելի, Կարմիր բանակի, Սպանդարյան փողոցներից, որտեղ իրականացվել եւ ընթացքի մեջ են քանդման, հողային, ճանապարհային պատվածքի, ուղիների եւ մուտքերի, մայթերի հիմնանորոգման, դիտահորերի պատերի ամրացման, կափարիչների, եզրաքարերի, եզրաշարերի, նոր մետաղական խողովակների տեղադրման, ջրամեկուսացման, ջրհավաք հորերի իրականացման եւ այլ բնույթի աշխատանքներ:

Հիշյալ փողոցներին կհաջորդի Գեղամա, Ռուսական, Աբովյան, Սայաթ-Նովա, Սյունյաց փողոցների հիմնանորոգումը: Հիմնանորոգումն ընդգրկում է 39657 քառակուսի մետր տարածք:

Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 628 միլիոն 990 հազար 550 դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2025 թվականի ընթացքում:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է ,Ճան-Շինե ՍՊԸ-ն:

Արմինե Ղուկասյան

12.qxd 09/06/2025 17:24 Page 4

ՄԵԼԻՔ ԹԱՆԳԻԻ ԿԱՄՈՒՐՋՆ ՈՒ ՈՐՈՏՆԱԲԵՐԴԸ

/սկիզբը՝ էջ 1-ում/

Ասում են, երբ ավարտել են կամրջի կառուցումը, Մելիք Թանգին ասել է.

-Եթե ժայռը չփլվի, կամուրջը չի քանդվի:

Մինչ մենք տպավորված ու հիացած ենք մեր տեսածով, Որոտնավանքի լուսաբացով, Թաթուլը մեզ տեղեկացնում է, որ կամրջի հյուսիսային կողմի ուղղահայաց ժայռի գագաթին տարածվում է հայտնի Որոտնաբերդը: Դժվար է պատկերացնել, որ երեք կողմերից երկինք բարձրացող, երկնքին գրեթե հպվող ժայռերի միջով մարդիկ ելք ու ճանապարհ են գտել՝ բերդ կառուցելու համար:

Թաթուլը բացատրում է, որ Որոտնաբերդ այց կատարելու դեպքում հետ կմնանք օրվա ծրագրած ուխտագնացությունից, ուստի պետք է բավարարվենք միայն պատմական այս փառավոր հուշարձանին ծանոթանալ դրոնի կողմից արված նկարահանման միջոցով:

Մեր առջեւ բացվում են բերդի պարիսպներ, շինությունների հետքեր, աշտարակներ: Շատ ցայտուն գծագրվեց պատմաճարտարապետական կառույցի պատկերը՝ շարժելով մեր հետաքրքրությունը: Բնական է, որ նման աշխարհագրական դիրք ունեցող ու ճանապարհների հանգույցում գտնվող Որոտնաբերդը միշտ գրավել է նվաճողների ուշադրությունը եւ առաջ մղել նրան տիրանալու ձգտումը:

Հինգերորդ դարի հայ պատմիչ Եղիշե Ոսկեբերանը Որոտնաբերդը հիշատակում է պարսկական բռնակալներից 450 թվականին Վարդանանց ազատագրած բերդերի ու ավանների թվում: 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը Որոտնաբերդը դասել է Սյունիքի նշանավոր բերդերի շարքը, որը 1075-1094 թվականներին պատկանել է Սյունյաց (Կապանի) թագավոր Սենեքերիմ Ա-ին: 1104 թվականին Որոտնաբերդը գրավել են սելջուկ թուրքերը, 1219 թվականին Իվանե Զաքարյանը ազատագրելով այն հանձնել է Լիպարիտ Օրբելյանին: 1386 թվականին Լենկթեմուրի հորդաները, ասպատակելով Սյունիքը, գրավել են նաեւ Որոտնաբերդը, որտեղ ամրացած Բուրթել եւ Սմբատ Օրբելյան իշխաններին գերեվարել են Սամարղանդ: 1407 թվականին Սմբատ իշխանից բերդը գրավել է Կարա-Յուսուֆ թեմուրյան բռնակալը: 1724 թվականին ուրացած Մելիք Բաղրից Որոտնաբերդը ազատագրել է Դավիթ Բեկը:



Որոտնբերդը տեղադրված է Լորաձորի գետաբերանի եւ Վաղատին գյուղի միջեւ գտնվող հսկայական ժայռազանգվածի վրա: Գահավեժ, բնական ժայռապարիսպները բերդի երեք կողմերից իջնում են դեպի Որոտանի կիրճը: Բերդի տարածքը կազմող հարթակը հավասարասրուն եռանկյան տեսք ունի, որի հյուսիսային անկյունում վեր է բարձրանում մի խոշոր ժայռազանգված, հարավում, մոտ 50 մետր բարձրության վրա միջնաբերդն է, իսկ հարթակի մյուս կողմերը զառիվայր են, բացի արեւմտյան հատվածից: Այս մասի ստորոտը զուրկ է ժայռերից եւ, կորագծով իջնելով, կազմում է մի նեղ, երկար պարանոց, որը միանում է կիրճի հակառակ կողմում առաջացած բնական սարաոստի: Բերդի ընդհանուր տարածքի այս հատվածը, ուր մինչ օրս նկատվում են շինությունների ու պարսպապատերի հետքեր, շատ ավելի մեծ է, քան բերդի բուն եռանկյունի հարթակը: Պարանոցի հատվածում եւս նկատվում են ավերակ շինությունների հետքեր եւ երկարությամբ ձգվող ոլորապտույտ պարսպապատի ստորին հատվածի մնացորդներ: Բերդի հերթական վերակառուցման ժամանակ երկու բարձունքները կապող նեղ պարանոցը փակելու անհրաժեշտություն է առաջացել, եւ լրացուցիչ պատնեշ է ստեղծվել ոչ միայն բերդին մոտենալու միակ ճանապարհին, այլեւ փակվել Որոտնավան գյուղին մոտենալու հարմար ուղղությանը:

Որոտնաբերդի արեւմտյան եւ արեւելյան հատվածներում պահպանվել են պարսպապատեր՝ կառուցված բազալտե, միջին չափերի կոպտատաշ քարերից, կրաշաղախի միջնաշերտով: Քարերը շարված են ըստ հորիզոնական շղթերի, ուղղահայաց եւ թեքադիր: Արեւմտյան պարսպապատը երկշերտ է՝ կազմված առաջնապարսպից եւ ներքնապարսպից: Առաջնապարիսպը սկիզբ է առնում հյուսիսային ժայռազանգվածի ստորոտից եւ, իր մեջ առնելով մի խոշոր ժայռաբեկոր, շարունակվում է մինչեւ բերդի գլխավոր մուտքը: Ներքնապարիսպը նույնպես սկիզբ է առնում հյուսիսային ժայռազանգվածից, որի միայն ստորին հատվածի մի մասն է պահպանվել, այնուհետեւ, ընդհատվելով, կորագծեր կազմելով, շարունակվում է անմիջապես մուտքի մոտից եւ փակում է արեւմտյան մասի ողջ երկարությունը մինչեւ հարավային կողմի զառիթափ հատվածը: Բերդի գլխավոր մուտքը ավերակ է, առաջնապարիսպը ավարտվում է ժայռից ոչ հեռու: Սրա ետեւում պարսպապատի երկրորդ գոտին է՝ ներքնապարիսպը, որը եւս ունի ավերակ դարպաս: Այս երկու դարպասները միեւնույն առանցքի վրա չեն գտնվում, որի պատճառով ստեղծվում է կրկնակի դարպասներով, անցախուցով մուտք:

Առաջնապարսպի միջին հատվածում, դրա ամբողջ բարձրությամբ կա մի ուղղանկյուն խորշ (4.14 մետր x 0.70 մետր), որն առաջացել է պարիսպը տեղանքի հետ հարմարեցնելու հետեւանքով: Պարսպապատերի այս խորշերը, որոնց հանդիպում ենք հնագույն շրջանում, կրկնվում են ողջ երկարությամբ: Պարսպի միջին բարձրությունը 5.5 մետր է, նկատվում են վերանորոգումների հետքեր: Առաջնապարսպի միջնամասում, ներսի կողմից պահպանվել ես ուղղանկյուն շինության (6.40 x 5.40 մ) պատերի ստորին հատվածները: Կառույցի պատը նույնպես եռաշերտ է՝ կառուցված բազալտե միջին չափերի կոպտատաշ քարերից: Կառույցի արեւմտյան պատի մոտ կեսը ագուցված է պարսպապատի մեջ, որը ենթադրել է տալիս, որ այն կառուցվել է ավելի ուշ: Հնարավոր է նաեւ, որ շինությունը օգտագործվել է որպես զինանոց:

Բերդի եռանկյունաձեւ հարթակի հարավային կողմը՝ ուր միջնաբերդն է, ավելի բարձր է: Այստեղ խմբավորված են առանց շաղախի, անկանոն քարերից կառուցված բազմաթիվ ուղղանկյուն սենյակներ:

Պարսպի մեկ այլ գոտի կառուցվել է արեւելյան կողմում: Այն նույնպես սկիզբ է առնում հյուսիսային ժայռազանգվածի ստորոտից, անմիջապես հպվելով նրան: Պարսպապատն ունի երկու աշտարակ՝ մեկը շրջանաձեւ, մյուսը՝ կիսաշրջանաձեւ: Երկուսն էլ սնամեջ են՝ կառուցված բազալտե կոպտատաշ միջին չափերի քարերից, կրաշաղախի միջնաշերտով: Այս հատվածում պատի միջին բարձրությունը 3 մետր է, հաստությունը՝ 0.80 մետր: Սնամեջ, շրջանաձեւ աշտարակի պատի ստորին մասում պահպանվել է կիր-ավազային սվաղի երկշերտ ծածկույթ, յուրաքանչյուր շերտի հաստությունը՝ 0.02 մետր: Աշտարակները ծառայել են որպես դիտակետ եւ պահակակետ, քանի որ դրանք տեղադրված են զառիվայր, բարձրադիր ժայռերի վրա, որտեղից երեւում է ամբողջ գետահովիտը: Շրջանաձեւ աշտարակին եւ հյուսիսային ժայռազանգվածին հպված, պարսպապատին ուղղահայաց պատի միջեւ եղած տարածությունը անպարիսպ է: Այս հատվածը նստում է բնական ժայռի վրա եւ ծածկված է փլատակներով: Այս հատվածում է եղել բերդի երկրորդ մուտքը: Չնայած այն գահավեժ իջնում է դեպի Որոտան գետը, սակայն անհրաժեշտության դեպքում հնարավոր էր օգտագործել նաեւ որպես կապի միջոց: Պատմական Որոտն (Ուռուտ) գյուղի ավերակները մինչեւ օրս նկատվում են բերդի արեւելյան պարսպապատի տակ: Այս մուտքից են օգտվել Որոտն գյուղի բնակիչները թշնամու հարձակումներից բերդը պաշտպանելու ժամանակ, քանի որ գլխավոր մուտքը գտնվում էր բերդի հակառակ կողմում, իսկ դրա ստորոտը ամբողջ հարավային կողմով շրջանցելը ժամանակի մեծ կորուստ կլիներ:

Արեւելյան պարսպապատի հարավ-արեւելյան հատվածում պահպանվել են ուղղանկյուն, միաթաղ կառույցի պատերը (2.5 մ միջին բարձրությամբ)՝ շարված բազալտե կոպտատաշ, միջին չափերի քարերից՝ կրաշաղախի միջնաշերտով: Այս շինությունը օգտագործված է որպես ջրամբար: Ի դեպ, Ե. Լալայանը իր աշխատություններից մեկում հիշատակում է, որ բերդի բաց կողմում փորված է եղել մի ստորերկրյա անցք՝ ջուր բերելու համար: Ջրամբարի հարավային կողմում կան պատին հպված մի քանի փոքր, ուղղանկյուն շինությունների հետքեր, որոնց պատերը շարված են բազալտե կոպտատաշ քարերից, առանց շաղախի: Բերդի հարավային կողմն անպարիսպ , քանի որ բնական ժայռապարիսպներն արդեն անառիկ են դարձնում այս հատվածը:

Տաթեւի հռչակավոր վանք մեկնելու ճանապարհին կարճատեւ կանգառ ենք կատարում Շամբի ջրամբարի մոտ՝ հիանալու լեռների գոգավորության մեջ փայլատակող ու ծփացող ջրերի աննկարագրելի նազանքով:



Շամբի ջրամբար գտնվում է Որոտան գետի վրա՝ Շամբ գյուղի մոտակայքում՝ մոտ 1350 մետր բարձրության վրա: Այն շահագործման է հանձնվել 1970 թվականին: Ջրամբարն ընդունում է Շամբի հէկից դուրս եկած ջրերը եւ Որոտան գետի հոսքը, որով կարգավորվում են Տաթեւի հէկ մտնող ջրի ելքերը, եւ կուտակված ջրի մի մասն օգտագործվում է ոռոգման նպատակով: Մակերեսը 1,26 քառակուսի կիլոմետր է, ջրատարողությունը՝ 13,6 միլիոն խորանարդ մետր: Լճում բուծում են իշխան, կարմրախայտ եւ այլ ձկնատեսակներ:

Լուսաբացի շողքերի ներքո Շամբի զուլալ ջրերը մի կախարդական հայելի էին դարձել՝ արտացոլելով իրենց մեջ շրջակա բնության բոլոր վառվռուն գույներն ու դիցական տեսքը:

Խոսրով Խլղաթյան

12.qxd 09/06/2025 17:24 Page 5

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵՑ ԾՈՎԻՆԱՐԻ ԵՎ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ԲՈՒԺԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՆԵՐ

Հունիսի 5-ին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը մարզում ընդունեց Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյիին, Իզերի դեպարտամենտալ խորհրդի մշակույթի, ժառանգության եւ ապակենտրոնացված համագործակցության հարցերի փոխնախագահ Պատրիկ Կուրտոյին, մշակույթի եւ միջազգային համագործակցության վարչության փոխտնօրեն Ժան-Լյուկ Գայարին, ֆրանսիական «Բժշկական օգնություն եւ զարգացում» կազմակերպության ներկայացուցիչ Ժան-Կլոդ Ռոսեին եւ ծրագրերի համակարգող Յասմինա Տոմեին՝ Գեղարքունիք-Իզեր համագործակցության շրջանակներում իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող առողջապահական ծրագրերը դիտարկելու նպատակով:

Այցի ընթացքում ֆրանսիական պատվիրակությանն ուղեկցում էր նաեւ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

Այցի առաջին կանգառը Մարտունի համայնքի Ծովինար գյուղում էր, որտեղ 2024 թվականի ընթացքում իրականացվել են բուժամբուլատորիայի շենքի հիմնանորոգման աշխատանքները: Շենքի հիմնանորոգման պայմանագրային արժեքը կազմում է շուրջ 12 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացվել է ֆրանսիական «Բժշկական օգնություն եւ զարգացում» կազմակերպության կողմից, իսկ 50 տոկոսը՝ Ծովինարի բուժամբուլատորիայի տնտեսված միջոցներից: Հիմնովին նորացվել են դռներն ու լուսամուտները, ջեռուցման համակարգը, հատակը, սանհանգույցները, կատարվել են նաեւ շենքի պատերի ներքին եւ արտաքին հարդարման աշխատանքներ: Ֆրանսիական կողմը Ծովինարի բուժամբուլատորիային է նվիրել մանկական կշեռք, էլեկտրասրտագրության ապարատ, անալիզատոր, խոնավաչափ, սեղաններ, պահարաններ եւ դեղորայքի պահարան:

Հյուրերը շրջայց կատարեցին հիմնանորոգված սենյակներում, զրուցեցին բուժանձնակազմի հետ եւ իրենց գոհունակությունը հայտնեցին կատարված աշխատանքներից: Ծովինարի բուժամբուլատորիայի տնօրենն ու աշխատակիցներն իրենց հերթին շնորհակալություն հայտնեցին ֆրանսիական պատվիրակության անդամներին ու Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին՝ նման կարեւոր նշանակության ծրագրի իրականացման համար:

Այցի երկրորդ կանգառը Մարտունի համայնքի Վերին Գետաշեն գյուղում էր, որտեղ 2025 թվականի ապրիլի կեսերից սկսվել եւ ընթանում են բուժամբուլատորիայի շենքի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի արժեքը կազմում է շուրջ 20 միլիոն 500 հազար դրամ, որն ամբողջությամբ իրականացվում է «Բժշկական օգնություն եւ զարգացում» կազմակերպության կողմից տրամադրված միջոցներով: 2024 թվականի հունիսի 5-ի դրությամբ շինարարական աշխատանքներն իրականացված են շուրջ 35-40 տոկոսով: Շինարարությունը նախատեսված է ավարտի հասցնել 2025 թվականի օգոստոսի վերջին:

Հյուրերը շրջայց կատարեցին շինտեղամասում, զրուցեցին շինարարների եւ բուժանձնակազմի հետ, ծանոթացան աշխատանքների ընթացքին:

Ամփոփելով այցի արդյունքները՝ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը եւ Իզերի դեպարտամենտալ խորհրդի ներակայացուցիչները հավաստեցին, որ Գեղարքունիքի մարզում շարունակվելու են առողջապահական ծրագրերը նաեւ առաջիկա տարիների ընթացքում: Նախնական պայմանավորվածության համաձայն՝ հիմնանորոգման ծրագրում առաջիկայում կընդգրկվի Երանոսի բուժամբուլատորիան:

«Գեղամա աշխարհ»

ԳՐԵՆՈԲԼ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հունիսի 2-ից 3-ը Սյունիքի մարզի Գորիս քաղաքում տեղի է ունեցել Հայաստան-Ֆրանսիա ապակենտրոնացված համագործակցության 5-րդ համաժողովը, որին մասնակցել են նաեւ Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի եւ Սեւան համայնքի պատվիրակությունները:

Համաժողովին հաջորդել է Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի պատվիրակության այցը Սեւան համայնք: Ֆրանսիական պատվիրակությունը գլխավորել է քաղաքապետ Էրիկ Պիոլը:

Գրենոբլի պատվիրակությանը հյուրընկալել է Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը: Կողմերը, ողջունելով միմյանց, բարեկամական ու արդյունավետ են գնահատել 21-ամյա համագործակցությունը, նշել տեսանելի ձեռքբերումները առողջապահության, տուրիզմի եւ ֆրանկոֆոնիայի ոլորտներում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել համագործակցության կենսունակությանն ու շարունակականությանն առնչվող ոլորտներին՝ առողջապահություն, զբոսաշրջություն, ֆրանսախոսության տարածում, վերականգնվող էներգետիկա, որոնք ներառվելու են նաեւ երկու քաղաքների հեռանկարային ծրագրերում:

Սեւան համայնքի ղեկավարն անդրադարձել է Սեւան համայնքում կառուցվող երաժշտական դպրոցի նոր շենքին, շեշտելով, որ այն իրողություն է դարձել «Հայաստան համահայկական հիմնադրամի» միջոցով՝ ֆրանսահայ բարերար Պետրոս Թերզյանի հովանավորությամբ:

-Երաժշտական նորակառույց դպրոցի նոր կահավորված լսարանն էլ, որը Գրենոբլի աջակցությամբ է իրողություն դարձել, միշտ հիշեցնելու է մեր բարեկամ Գրենոբլի ներկայությունը ոչ միայն երաժշտական դպրոցի այդ անկյունում, այլ նաեւ համայնքում,-հավելել է Սարգիս Մուրադյանը:

Քաղաքապետ Պիոլը ուրախությամբ նշել է, որ հայ-ֆրանսիական հաջորդ համաժողովը կայանալու է 2028 թվականին, Գրենոբլ քաղաքում, որը եւս մեկ ազդակ է համագործակցության ամրապնդման համար:

Հանդիպման ավարտին հայ եւ ֆրանսիացի բարեկամները փոխանակվել են հուշանվերներով:

Գրենոբլ քաղաքի պատվիրակության այցը Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի եւ համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների ուղեկցությամբ, շարունակվել է համայնքի այն բնակավայրերում, հաստատություններում եւ կառույցներում, որտեղ Գրենոբլի քաղաքապետարանի աջակցությամբ եւ օժանդակությամբ իրականացվել են ոլորտային մի շարք ծրագրեր:

Այցի առաջին հասցեն եղել է Սեւան համայնքի Ծաղկունք բնակավայրը, որտեղ իրականացվել է բուժակ–մանկաբարձական կետի համար նախատեսված տարածքի վերանորոգում «Բժշկական օգնություն եւ զարգացում» ասոցիացիայի կողմից՝ Սեւան-Գրենոբլ համագործակցության առողջապահական ծրագրի շրջանակներում:Այս ծրագրի արդյունքում բնակիչների համար առաջնային բուժօգնությունը դարձել է առավել հասանելի, միջավայրը՝ հարմարավետ:

Այցի երկրորդ հասցեն եղել է Գեղամավան բնակավայրը , որտեղ վերանորոգվել է բուժակ–մանկաբարձական կետը: Վերանորոգման աշխատանքներին զուգահեռ տեղադրվել է ջեռուցման համակարգ, ԲՄԿ-ն համալրվել է առաջին օգնության համար անհրաժեշտ սարքավորումներով, տեխնիկական միջոցներով:

Այցի երրորդ հասցեն եղել է Սեւանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի նոր շենքի կառուցման շինհրապարակը:

2023 թվականին մեկնարկել եւ 2025 թվականի հունիս ամսին վերջնագիծը կհատի երաժշտական դպրոցի նոր շենքի կառուցումը:

Գրենոբլի քաղաքապետարանը հանդես է եկել նախաձեռնությամբ եւ երաժշտական դպրոցի դասասենյակներից մեկը կահավորել է՝ տրամադրելով դաշնամուր, էլեկտրոնային գրատախտակ, հեռուստացույց, սեղան եւ աթոռ:

Այցի չորրորդ հասցեն եղել է «Բողբոջ» մանկապարտեզը, որը եւս ապակենտրոնացված համագործակցության ծրագրերի շահառուներից է: Մանկան այս օջախն առաջինն է, որտեղ հիմնանորոգվել է բուժկետը, կահավորվել, ինչպես նաեւ տեղադրվել է արեւային ջրատաքացուցիչ:

Ի թիվս իրականացված աշխատանքների, նախատեսվում է մանկապարտեզում եւս մեկ արեւային ջրատաքացուցիչի տեղադրում խոհանոցի համար:

Ֆրանսիացի գործընկերները շփվել են նաեւ փոքրիկների հետ, ծանոթացել նրանց առօրյային, մանկապարտեզում նախատեսվող ծրագրերին:

Այցի հինգերորդ հասցեն եղել է Սեւանի Ս. Զաքարյանի անվան մշակույթի պալատը: Ֆրանսիացի գործընկերներին հետաքրքրել են պալատի հնարավորությունները, ինչպես նաեւ դահլիճի հետ կապված որոշ տեխնիկական հարցեր:

Հայ գործընկերների հետ քննարկումները համատեղվել են նախնական պայմանավորվածություններով, նոր ծրագրերի ուրվագծումներով:

Առաջիկա ծրագրերի վերաբերյալ երկու քաղաքների առաջին դեմքերը ձեռք են բերել պայմանավորվածություններ:

Սեւան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանը վստահեցրել է, որ Սեւան-Գրենոբլ համագործակցությունը հավակնում է դառնալ լավագույն օրինակ արդյունավետ եւ նպատակասլաց գործընկերության:

Հագեցած եւ բազմաշերտ օրակարգը հնարավորություն է տվել, որպեսզի ֆրանսիացի գործընկերները ոչ միայն տեղում ծանոթանան 21-ամյա ապակենտրոնացված համագործակցության ընթացքում իրականացված նշանակալի ծրագրերին, այլ նաեւ վայելեն Սեւանի զբոսաշրջային գրավչությունները, այցելեն մի շարք տեսարժան վայրեր:

Արմինե Ղուկասյան

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱՐԿԸ ՀԱՄԱԼՐՎԵՑ ԵՎՍ ՄԵԿ ԻՆՔՆԱԹԱՓՈՎ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի կոմունալ տեխնիկայի ավտոպարկը համալրվել է ինքնաթափ մեքենայով:

Ինքնաթափ մեքենայի արժեքը կազմում է 27 միլիոն 500 հազար դրամ:

Սեւան համայնքը, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ եւ «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների եւ տեղական զարգացման ծրագրի Բաղադրիչ 2»-ի շրջանակներում, 2022 թվականին դիմել էր «Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին»՝ Սեւան համայնքի կարիքների համար ձեռք բերելու կոմունալ տրանսպորտային միջոցներ:

Վերջին տրանսպորտային միջոցով ամբողջացվել է Սեւան համայնքին հատկացվող տրանսպորտային միջոցների ցանկը, որոնք յոթն են՝ JCB մակնիշի բուլդոզեր, բազմաֆունկցիոնալ էքսկավատոր, բազմաֆունկցիոնալ մինի ամբարձիչ, անվավոր տրակտոր, Գրեյդեր, որոնք օգտագործվում են «Սեւան համայնքի կոմունալ սպասարկում եւ բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից՝ բարելավելով համայնքի կոմունալ սպասարկման վիճակը եւ մատուցվող ծառայությունների որակը:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ

Մայիսի 29-ին Գեղարքունիքի մարզային գրադարանը Գավառի ուսուցողական կենտրոնի դահլիճում կազմակերպեց հայրենասիրական միջոցառում՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-րդ տարեդարձին:

Միջոցառման պատվավոր հյուրն էր Հայրենական մեծ պատերազմի վետերան, բազմավաստակ մանկավարժ, 103-ամյա Մեխակ Ավետիսյանը:

Բացման խոսքով հանդես եկավ Գեղարքունիքի մարզային գրադարանի տնօրեն Մարիամ Համբարձումյանը: Նա ընդգծեց վետերանի՝ հայրենիքին ու սերունդների կրթությանը մատուցած անգնահատելի ծառայությունները եւ մարզային գրադարանի կողմից Մեխակ Ավետիսյանին հանձնեց շնորհակալագիր ու հուշանվեր:

Միջոցառման ընթացքում ցուցադրվեցին մարզային գրադարանի պատրաստած երկու տեսաֆիլմ՝ նվիրված Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Նոր Բայազետից ռազմաճակատ մեկնած քաջորդիներին: Ֆիլմերն ընդգծեցին նրանց հերոսական անցած ուղին, անսասան կամքն ու անմար հավատը: Ներկայացվեց Սովետական Միության հերոս Գեդեոն Միքայելյանի կյանքը եւ գիտական գործունեությունը, Նոր Բայազետից պատերազմ մեկնած քաջորդիներ՝ Իտալիայի ազգային հերոսներ Գեւորգ Քոլոզյանի եւ Մկրտիչ Դաշտոյանի սխրանքները, պարտիզանական շարժման ղեկավար Վաչիկ Քալաշյան-Պողոսյանի ներդրումը, ինչպես նաեւ անվանի գիտնական Սամվել Քոչարյանցի կյանքն ու գիտական ուղին:

Միջոցառման մասնակիցներին ողջունեցին Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը եւ Սարուխանի վարչական ղեկավար Լյովա Աբրահամյանը:

Հիշողությունների տպավորիչ անդրադարձներով ելույթ ունեցան Մեխակ Ավետիսյանը, Իլյիչ Նավասարդյանը, ՀԳՄ Գեղարքունիքի մարզային բաժանմունքի պատասխանատու Տիգրան Նիկողոսյանը եւ Հայաստանի Հայրենական մեծ պատերազմի վետերանների միության նախագահ, գնդապետ Սիմոն Եսայանը:

Գեղեցիկ ելույթով եւ դաշնամուրային կատարմամբ միջոցառման մասնակիցներին ողջունեց Ռոման Բունոյանը՝ իր սրտի խոնարհումը արտահայտելով ներկա վետերանին եւ բոլոր հերոսների հիշատակին:

Պարային կատարումներով հանդես եկան «Golden Dance» պարային համույթը՝ Աիդա Աղոյանի ղեկավարությամբ, իսկ կիթառի կատարմամբ՝ Լալա Միրիբյանը :

Միջոցառումը վարեցին Գավառի Լ. Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասաններ Սուսաննա Սարգսյանը եւ Մուշեղ Սիմոնյանը:

Ալինա Ավետիսյան

«ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԽՃՈՒՂԱՅԻՆ ՀԵԾԱՆՎԱՎԱԶՔԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂ ԹԻՄԵՐԸ

2025 թվականի մայիսի 30-ին Գեղարքունիքի մարզի համայնքային փուլի հաղթող դպրոցական թիմերը մասնակցել են «ՀՀ Վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի Գեղարքունիքի մարզային փուլին, որը կայացել է Շողակաթ-Ծովագյուղ ավտոմայրուղու 30 կմ հատվածում:

Մրցումներին ներկա են եղել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Արման Անտոնյանը:

Հեծանվորդների անվտանգությունն ապահովել են ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայության Գեղարքունիքի մարզի գումարտակի պարեկները, իսկ առաջին բուժօգնությունը՝ Ճամբարակի առողջության կենտրոնի շտապօգնության բրիգադը:

Առաջին տարիքային խմբում (7-9-րդ դասարանցիներ) առաջատարը եղել է Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1, երկրորդ հորիզոնականում՝ Սեւանի N 4 հիմնական, իսկ երրորդ հորիզոնականում՝ Գետիկի միջնակարգ դպրոցների թիմերը:

Երկրորդ տարիքային խմբում (10-12-րդ դասարանցիներ) լավագույն արդյունքը ցուցաբերել է Վաղաշենի միջնակարգ դպրոցի թիմը: Երկրորդ տեղը գրավել է Լճավանի, իսկ երրորդ տեղը՝ Ծովազարդի միջնակարգ դպրոցների թիմերը:

Երկու տարիքային խմբերում մրցանակային տեղեր գրաված թիմերին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հանձնվել են գավաթներ եւ հավաստագրեր:

Մարզային մրցաշարում, ըստ տարիքային խմբերի, առաջին տեղ գրաված թիմերը սեպտեմբեր ամսին կմասնակցեն «ՀՀ Վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի եզրափակիչ փուլի մրցումներին:

Գեղամ Չարվադարյան

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՅՍ ՏԱՐԻ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ 8 ԾՐԱԳԻՐ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում շուտով կմեկնարկեն ճանապարհաշինական մեծածավալ աշխատանքներ:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, ճանապարհաշինական 8 ենթածրագրերի իրականացման համար արդեն հայտարարված են շինարարական մրցույթները:

Մեծ Մասրիկ եւ Շատջրեք բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման մրցույթը հայտարարվել է 84 միլիոն 101 հազար 110 դրամ, Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի գերեզմանոց տանող ճանապարհի եւ Ս.Ավետիսյան փողոցի ասֆալտապատման աշխատանքների մրցույթը՝ 87 միլիոն 311 հազար 990 դրամ,Վարդենիս համայնքի Վանեվան բնակավայրի Գարագաշի փողոցի ասֆալտապատման աշխատանքների մրցույթը՝ 129 միլիոն 458 հազար 004 դրամ, Ծովակ բնակավայրի փողոցների ասֆալտապատման, մայթերի կառուցման եւ կահավորման աշխատանքների մրցույթը՝ 273 միլիոն 328 հազար 040 դրամ, Լուսակունք բնակավայրի փողոցների ասֆալտապատման, մայթերի կառուցման եւ կահավորման աշխատանքների մրցույթը՝ 90 միլիոն 363 հազար 240 դրամ, Վարդենիսի քաղաքի Անդրեասյան, Երիտասարդության եւ Լ.Ազգալդյան փողոցների ասֆալտապատման աշխատանքների մրցույթը՝ 149 միլիոն 796 հազար 970 դրամ, Վարդենիս քաղաքի Երիտասարդության 2 եւ 6, 12, 3 եւ 11, Արզոյան 2 հասցեներում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքների մրցույթը՝ 94 միլիոն 454 հազար 699 դրամ, Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան 17 եւ 19, Լեռնագործների 1/1 եւ 1/2 հասցեներում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքների մրցույթը՝ 82 միլիոն 311 հազար 560 դրամ նախնական արժեքով:

Շինարարական մրցույթների արդյունքները կամփոփվեն հունիսի 16-ին, իսկ շինարարական աշխատանքների մեկնարկը կտրվի 2025 թվականի հուլիսի կեսերից:

Ճանապարհաշինական աշխատանքների իրականացման նախահաշվային արժեքը կազմում է 991 միլիոն 125 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնելու է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Վարդենիսի համայնքապետարանը:

Խոսրով Խլղաթյան

ԱՐԵԳՈՒՆԻՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արեգունի գյուղում «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ 2024 թվականի նոյեմբերից մեկնարկել եւ ընթանում են 224 տեղանոց կրթահամալիրի կառուցման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Արփունքի կրթահամալիրի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 210 միլիոն դրամ: Արդի չափորոշիչներին համապատասխան կրթահամալիր կհաճախեն Վարդենիս համայնքի Արեգունի, Փամբակ եւ Դարանակ բնակավայրերի նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաները: Դպրոցը կունենա 144, մանկապարտեզը՝ 80 աշակերտ տեղ:

2025 թվականի հունիսի 6-ի դրությամբ այստեղ ավարտվել է հիմքի կառուցումը, այժմ ընթանում են պատերի կառուցման աշխատանքները: Շինարարությունն իրականացված է շուրջ 15 տոկոսով:

Շինարարական աշխատաքններն իրականացնում է «Եվրոպա» ՍՊԸ-ն:

Արեգունու կրթահամալիրի շինարարությունը նախատեսված է ավարտել 2026 թվականի սեպտեմբերին:

ԾՈՎԻՆԱՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար գյուղում 2025 թվականի մայիսից մեկնարկել եւ ընթանում են 578 տեղանոց դպրոցական նոր շենքի կառուցման աշխատանքները՝ «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» պատվիրատվությամբ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 635 միլիոն դրամ: Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Արմատ» ՍՊԸ-ն:

Շինարարությունը նախատեսվում է ավարտել 30 ամսվա ընթացքում:

Դպրոցական նոր շենքը կառուցվում է Ծովինարի միջնակարգ դպրոցի ֆուտբոլի դաշտի տարածքում, հետեւապես՝ շինարարությունը ոչնչով չի խանգարում դասերի կազմակերպմանը:

2025 թվականի հունիսի 6-ի դրությամբ արդեն փորվել է նկուղային հարկը, իրականացվում են բետոնացման աշխատանքներ:

12.qxd 09/06/2025 17:24 Page 7

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԸ ՄԻԱՑԵԼ Է ԵՄ «ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՇԱԲԱԹՎԱՆ»

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքը 2025 թվականի մայիսի երրորդ տասնօրյակից միացել է ԵՄ «Կայուն էներգիայի շաբաթ» ծրագրի միջոցառումներին:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, այս տարվա միջոցառումները կրում են «Արդար եւ մրցունակ կանաչացման խթանում» խորագիրը:

Միջոցառումների մեկնարկը տրվել է Վարդենիսի Կոմիտաս Կարապետյանի անվան մանկական գեղարվեստի դպրոցում: Գեղարվեստի դպրոցի 10–12 եւ 13–15 տարեկան սաները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ծրագրին՝ ստեղծելով աշխատանքներ, որոնք արտացոլում են իրենց պատկերացումները կայուն զարգացման եւ էկոլոգիական պատասխանատվության մասին: Նախատեսվում է ծրագրի ավարտին կազմակերպել ցուցահանդես՝ «Մեր կանաչ համայնքը» խորագրով, որի նպատակն է երեխաների ստեղծագործությունների միջոցով տարածել էկոլոգիապես պատասխանատու վարքագծի գաղափարը եւ ներկայացնել նրանց տեսլականը՝ կայուն ու էկոլոգիական առումով մաքուր ապագայի վերաբերյալ:

Մայիսի 27-ին Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի մանկապարտեզում անցկացվել է «Սովորում ենք սիրել բնությունը» թեմայով բակի մաքրում:

Մանկապարտեզի սաները՝ դաստիարակների եւ աշխատակիցների ուղեկցությամբ ու աջակցությամբ, մաքրել են բակի տարածքը եւ տնկել ծաղիկներ: Դաստիարակները երեխաներին բացատրել են, թե որքան կարեւոր գործ են անում՝ խնամելով շրջակա միջավայրը եւ նպաստելով մաքրությանը:

Նույն ծրագրի շրջանակներում Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի մանկապարտեզում անցկացվել է տեղեկատվական պարապմունք-միջոցառում «Կրթություն՝ հանուն կայուն եւ կանաչ ապագայի» թեմայով:

Միջոցառման ընթացքում ցուցադրվել են թեմատիկ անիմացիաներ, որոնք երեխաներին հասանելի ու հետաքրքիր ձեւով են ներկայացրել կանաչ էներգիայի կայուն զարգացման գաղափարները: Դրանց շնորհիվ երեխաները կարողացել են ձեւավորել ավելի ամբողջական պատկերացում շրջակա միջավայրի պահպանության եւ էներգիայի խնայողության կարեւորության մասին:

Տեղեկատվական մասից հետո փոքրիկները մասնակցել են ստեղծագործական աշխատանքին՝ պատրաստելով թեմատիկ ամփոփիչ պաստառ:

Նույն ծրագրի շրջանակներում Վարդենիս քաղաքի մանկական գրադարանում անցկացվել է «Կայուն էներգիայի եւ թափոնների կառավարման» վերաբերյալ տեղեկատվական հանդիպում:

Միջոցառման առաջին մասում անդրադարձ է եղել Վարդենիսում արեւային էներգիայի կիրառման փորձին: Քննարկվել են այս տեխնոլոգիայի՝ շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված էկոլոգիական օգուտները, ինչպես նաեւ համայնքի տնտեսության վրա դրական ազդեցությունները: Արեւային լուծումները դիտարկվել են որպես համայնքի էներգետիկ անկախության կարեւոր խթան: Միջոցառման երկրորդ մասը նվիրվել է թափոնների վերամշակման եւ երկրորդական օգտագործման կարեւորությանը: Մասնակիցներն ներկայացվել է, թե ինչպես կարելի է նվազեցնել բնության ու շրջակա միջավայրի աղտոտումը եւ նպաստել կենցաղային կոշտ թափոնների կայուն կառավարմանը:

-Արվում է հնարավորը, որպեսզի երեխաների մոտ ձեւավորվի բնապահպանական առանձնահատուկ դաստիարակություն, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը սիրի ու փայփայի հայրենի բնությունը, ծառի ու թփի խնամումը , ռեսուրսների խնայումը դարձնի կենսակերպ: ԵՄ «Կայուն էներգիայի շաբաթվա» շրջանակներում միջոցառումներ կանցկացվեն նաեւ մեր համայնքի ուսումնական այլ հաստատություններում,- ներկայացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԵՄ «ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՇԱԲԱԹ» ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Մայիսի 26-ից Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում սկսվել եւ ընթանում են ԵՄ «Կայուն էներգիայի շաբաթ» ծրագրի միջոցառումները:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, միջոցառումների մեկնարկը տրվել է Մարտունի քաղաքի թիվ 2 մանկապարտեզում ու Ծովինար գյուղում: Մարտունու թիվ 2 մանկապարտեզում անցկացվել է «Ջուրը կյանք է» թեմայով նախագծային աշխատանք եւ Սեւանի բնապահպանական խնդիրներին նվիրված դաս, իսկ Ծովինար գյուղում կազմակերպվել է ծառատունկ:

Առաջիկա օրերին նախատեսվում է Մարտունու թիվ 2 մանկապարտեզում կազմակերպել նկարչական աշխատանքների մրցույթ-ցուցահանդես՝ «Մաքուր էներգիա՝ մաքուր ապագա» խորագրով: Մարտունու կենտրոնական գրադարանում անցկացվել է ցերեկույթ՝ «Բնության գովերգանքը հայ գրականության մեջ» թեմայով: Այնուհետ

Սպորտլանդիա է կազմակերպվել համայնքի յոթ մանկապարտեզներում:

Կանցկացվի բանավեճ «Ընդհանուր կայուն էներգիայի քաղաքականությունը ՀՀ-ում» թեմայով, լուսանկարչական մրցույթ «Իմ համայնքը՝ կայուն զարգացման ճանապարհին» խորագրով, Սեմինար՝ «Ի՞նչ է էներգախնայողությունը, էներգաարդյունավետությունը եւ վերականգնվող էներգիան», «Էներգախնայողությունն ու էներգաարդյունավետությունը գյուղատնտեսությունում» թեմաներով, հեծանվավազքի մրցույթ Մարտունի համայնքի տարածքում, տիկնիկային ներկայացում համայնքի մանկապարտեզներում՝ «Արեւիկի ու քամու արկածները» թեմայով:

Միջոցառումներն անցկացվում են «Արդար եւ մրցունակ կանաչ անցման խթանում» խորագրով: Նախաձեռնությունը միտված է էներգախնայողությանը, էներգաարդյունավետությանը, Երկրի ընդերքի ռեսուրսների սպառման եւ ածխածնի երկօքսիդի արտանետումների նվազմանը, ինչպես նաեւ առողջ ապրելակերպի խթանմանը: Մրցույթներում հաղթողներին եւ միջոցառումների ամենաակտիվ մասնակիցներին սպասվում են մրցանակներ:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՆՈՐԱՏՈՒՍԻ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում սկսվել եւ ընթանում են Վարդան Մամիկոնյան փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Նորատուսի Վարդան Մամիկոնյան փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 85 միլիոն 500 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է հողային հարթեցում, ավազակոպճային հիմքի եւ ասֆալտբետոնյա շերտի տեղադրում՝ 960 գծամետր երկարությամբ եւ շուրջ 5760 քառակուսի մետր մակերեսով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն: 2025 թվականի մայիսի վերջի դրությամբ շինարարությունն արդեն գտնվում է ավարտական փուլում:

Հիմնանորոգվող փողոցը Գավառ-Մարտունի մայրուղուց դեպի բնակավայրի կենտրոն տանող հատվածն է, որի գործարկումը կկրճատի ճանապարհը եւ կթեթեւացնի բնակավայրի երթեւեկությունը:

Ալվարդ Մանուկյան

ՄԱՔՐՎԵԼ Է ԳԱՎԱՌԱԳԵՏԻ ՄԻ ՀԱՏՎԱԾ, ՍԵԼԱՎԱՏԱՐ – ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ԱՌՈՒ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում, համայնքապետարանի միջոցների հաշվին, մաքրվել է Գավառագետի հունի մի հատվածը Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, միաժամանակ՝ մեկ սելավատար:

Այժմ էլ ընթանում են Գավառի Արծվաքար թաղամասի դրենաժային առվի մաքրման աշխատանքները: Կատարված աշխատանքների արդյունքում պակասել է հարակից տարածքների եւ բնակարանների խոնավությունը, հնարավոր է դարձել տարբեր հողատեսքերի մշակումը, որոնք գարնանային վարարումների արդյունքում խոնավացել կամ ծածկվել էին ջրով: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 9 միլիոն 780 հազար դրամ: Մաքրման աշխատանքները կավարտվեն առաջիկա օրերի ընթացքում:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԾԱՆՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում սկսվել եւ ընթանում են փողոցների գծանշման աշխատանքները: Պատվիրատուն Գավառի համայնքապետարանն է, կապալառուն՝ «Ռեուդ Մարկինգս» ՍՊԸ-ն: Աշխատանքների համար Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված է հատկացնել 13 միլիոն դրամ:

Այս գումարի շրջանակներում նախատեսված է նաեւ ճանապարհային նշանների տեղադրում:

Գծանշման եւ ճանապարհային նշանների տեղադրման աշխատանքները նախատեսված է ավարտել հունիս ամսվա ընթացքում:

ՄԵՐ ԱՆՎԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ. ՃԱՆԱՉՎԱԾ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՍԻՐՎԱԾ ԴԱՍԱԽՈՍԸ

Կան մեզանից հավերժ բաժանվածներ, հեռացածներ, որոնք միշտ ներկա են մեր հոգու ու սրտի մեջ, որոնց միշտ հիշում ենք երախտագիտությամբ, անհուն սիրով ու կարոտով:

Զարմանալ ու հիանալ կարելի է, որ 20-րդ դարի սկզբին նորբայազետցի Երվանդ Հակոբյանի՝ նյութապես ոչ այնքան ապահով ընտանիքում ծնվել ու մեծացել են գիտության երկու դոկտոր-պրոֆեսորներ՝ Սուրեն եւ Հակոբ Հակոբյան եղբայրները:

1907 թվականին Նոր Բայազետում ծնվում է պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ Սուրեն Երվանդի Հակոբյանը: 1928-1932 թվականներին նա սովորել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Համալսարանն ավարտելուց հետո գործուղվել է հայրենի քաղաք, որտեղ աշխատել է տեղի մանկավարժական տեխնիկումում՝ որպես տնօրեն եւ պատմության ուսուցիչ: 1933 թվականին տեղափոխվել է Երեւան, որտեղ սկսել է աշխատել «Սովետական դպրոց» թերթի խմբագրությունում, որպես բաժնի վարիչ: Այնուհետեւ սովորել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի ասպիրանտուրայի հեռակա բաժնում՝ միաժամանակ հանդիսանալով Երեւանի հեռակա մանկավարժական ինստիտուտի պատմության դասախոս:



Մեծ հայրենական պատերազմի առաջին իսկ օրվանից նա զինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը եւ զինվորի շինելը չհանեց մինչեւ պատերազմի հաղթական ավարտը: Բանակից զորացրվելուց հետո՝ 1946 թվականից, Սուրեն Հակոբյանը սկսեց աշխատել Հայաստանի գիտությունների պատմության ինստիտուտում՝ միաժամանակ դասավանդելով Հայկական մանկավարժական ինստիտուտում: Մամուլում հրատարակվել են նրա բազմաթիվ պատմագիտական հոդվածները: Առանձին գրքերով լույս են տեսել նրա «Ռուսական կենտրոնացված պետության կազմավորումը» /ուսումնական ձեռնարկ, 1937/, «Հայ գյուղացիության պատմություն» մենագրությունը /1964 թ./, որը նրա դոկտորական ատենախոսությունն է, «Արեւմտյան Հայաստանը իմպերիալիստական պետությունների պլաններում առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում» /1967 թ./: Պրոֆեսոր Սուրեն Հակոբյանը 1946-49 թվականներին դասախոսում է Երեւանի հեռակա մանկավարժական ինստիտուտում՝ միաժամանակ զբաղոցնելով պատմության ամբիոնի վարիչի պաշտոնը: Նույն թվականներին նա դասավանդել է նաեւ Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում՝ 1950-1964 թվականներին, լինելով պատմության ամբիոնի վարիչը, իսկ 1964 թվականից՝ Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչը:

Ճանաչված պատմաբանը զբաղվել է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, պատմագրության սոցիալ-տնտեսական հարցերով: Հայ միջնադարի պատմության սոցիալ-տնտեսական հարցերին է նվիրված պրոֆեսոր Սուրեն Հակոբյանի երկհատոր մենագրությունը՝ նվիրված հայ գյուղացիությանը: Այդ երկհատոր աշխատությունը կարելի է համարել նաեւ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական պատմության մնայուն եւ հիմնարար աշխատություն: Ցավոք, այդ ֆենոմենալ աշխատության երրորդ հատորը, որը պատրաստ էր հրատարակության, այդպես էլ լույս չտեսավ. խանգարեց գիտնականի անսպասելի մահը:

Նշանավոր պատմաբանը, սիրելի դասախոսը կյանքից հեռացավ 1976 թվականին, երբ նոր էր բոլորել նրա 69 ամյակը:

Սամվել Աղլամազյան

ՀՈՎՀԱՆՆԵՍԱՊԱՏՈՒՄ

Երեւանում քեֆը լավ ժամանակ Հովհաննեսին են մոտենում երկու մանր գրպանահատ, ցանկանում են խմած մարդուց փող թռցնել: Զգալով իրադրությունը՝ Հովհաննեսը բռնում է մեկի ձեռքը, պինդ սեղմում ու ասում.

- Ջեբսի փող չկա, տվել եմ արաղի, թե խմող ես, շշի կեսը կա, տար խմի:

Ժուլիկներն արագ ծլկում են:

***

Քիչ խմած Հովհաննեսը պահեստապետ Դավթյան Միրզոյի հետ մտնում են արհեստանոցի տարածքում գտնվող Խաչոյի մթերային խանութ՝ արաղ առնելու: Առեւտուրն անելուց հետո գործակատարը, թե՝ քիչ առաջ ձեր աշխատող Պայծառն էլ էր էստեղ կանգնած, նոր գնաց:

-Որտե՞ղ էր կանգնած,- հետաքրքրվում է Հովհաննեսը:

Ա՛յ, էս դախլին կպած կանգնած էր:

Ուրեմն մեր քարտատեկիստ Պայծառի մարմինը կպելա էս դախլի՞ն,-ասում է Հովհաննեսը ու կռանում, պինդ համբուրում է դախլը:

***

Հովհաննեսի հումորը չէր դադարում նաեւ տխուր, ողբերգական պահերին: Տիկին Մարգարիտը, որը գրեթե ամբողջ կյանքում պահել, պաշտպանել, խնամել, նաեւ տառապել էր խմող Հովհաննեսի ձեռքին, մահացավ 1999 թվականին, Հովհաննեսից մեկ տարի շուտ: Հովհաննեսը դիակի կողքին հարազատների հետ նստած լուռ թախծում էր, ու հանկարծ ասաց.

-Մարգարիտ ջան, խմելու համար էլ իմ վրեն չխոսա՞ս...

Իսկ թաղման օրը գերեզմանոցում քավոր Սահակյան Գուրգենը վշտալի դամբանականից հետո, երբ ցանկացավ օղու բաժակից հեղել շիրմաքարին, Հովհաննեսը հոծ, տխրադեմ բազմության ներկայությամբ՝ Գուրգեն ջան, ինք չխմա, մի՛ լից, մի՛ լից, հինք խմող չէ:

***

2000 թվականն է, նոր՝ 21-րդ դար, նոր՝ 3-րդ հազարամյակ: Գրեթե ամբողջ 20-րդ դարն ապրած մարդը երիտասարդական խանդավառությամբ ապրում է իր կյանքի վերջին տարին: Զավակներն այցելում են հայրիկին, շնորհավորում: Բաժակ վերցնում, ասում է.

-Չմեռանք, 2000 թիվն էլ տեսանք, բարով տեսանք: Խմելուց հետո ավելացնում է.

- Յարաբ, 3000 թիվն էլ կտեսնե՞նք, թե՝ ոչ:

Տղաները թղթի վրա մեծ տառերով գրում են՝ 3000 թվական:

Հովհաննեսը ուրախ սրամտեց.

- Վա՜յ, 3000 թիվն էլ տեսա, հիմա հանգիստ կերթամ աշխարհից:

***

Հովհաննեսը մտնում է Մարտունու «Բակալեյա» կոչվող մթերային խանութը՝ օղի գնելու: Այդ պահին Երեւանից եկած ստուգողները հանկարծակի փակում են տվյալ օբյեկտը՝ բոլոր հաճախորդներին դուրս հրավիրելով: Հովհաննեսը դուրս չի գալիս: Հանձնախումբը պահանջում է նաեւ Հովհաննեսից, որ դուրս գա, խանութի առեւտուրը դադարեցված է, բաժինները՝ կնիքված:

-Չեմ կարող դուրս գալ,- ասում է վերջինս՝ նրանց ցույց տալով հատակին իր կողմից գծված շրջանագիծը, որի մեջ կանգնել էր,- կավիճով գծված շրջանակից դուրս կգամ միայն պայմանով:

-Ի՞նչ պայման, ինչ եք ուզում:

- Մի զույգ օղի տվեք, որ դուրս գամ,- ու մեկնում է փողը: Ստուգողները, տեսնելով տարեց ու համառ հաճախորդին, բացառության կարգով ընդառաջում են:

***

Ավդալյան Գարեգինի «Դեմերի» բուֆետում հաճախորդներն անպակաս են, մաքուր օղի, թարմ պիվա, համեղ խորտիկներ, ջերմ սպասարկում, կյանքը եռում է: Այնտեղ են նաեւ Հովհաննեսն իր ընկեր Միլիտոնի հետ: Սա օղու բաժակը վերցնում է, կենաց ասում եւ ուզում խմել: Հովհաննեսը թե՝ քո բաժակը շատ է լցված, բեր, հավասարեցնենք, նոր խմիր:

Բաժակները դնում են իրար կողքի, նայում են, Հովհաննեսն իր ճկույթ մատը մտցնում է ընկերոջ բաժակի մեջ, թրջում, կաթեցնում իր բաժակի մեջ, նայում՝ ու ասում.

- Այժմ հավասար են, խմի՛ր:

***

Մինչեւ 1960 թվականը Ներքին Գետաշենում չկար միջնակարգ դպրոց, 7-ամյա դպրոցի տնօրենը հարգված մանկավարժ, ռուսաց լեզվի մասնագետ Հմայակ Չիբուխչյանն էր /քյավառցի էր/: Մի անգամ դասալսման ժամանակ, երբ աշակերտներն արտասանում են «Կուզեի լինել կարկաչուն վտակ», «Մնաք բարով, արեւ, գարուն» եւ այլն, տնօրենը հետաքրքրվում է, թե ում ստեղծագործություններն են, հայ գրականության խորագիտակ Շահինյանը պատասխանում է՝ Հովհաննես Հովհաննիսյանի:

-Հա, էս մեր Աշխի Հովհաննեսի՞...

- Ոչ, մեծ բանաստեղծ, հայրենասեր, Հովհաննես Մկրտչի Հովհաննեսիյանի, իսկ մեր Հովհաննեսը, որը շատ կարդացած մարդ է, նրա երկրպագուներից է, մի անգամ նույնիսկ երգում էր բանաստեղծի տեքստով գրված «Արազն եկավ լափին տալով»-ը, արտասանում «Ախ, տվեք ինձ քաղցր մի քուն» եւ այլն:

«Այդքան խմող ու այդպիսի պայծառ հիշողությո՞ւն»-, զարմանքով մտածում է Չիբուխչյանը:

***

Հովհաննեսի գրպանում օղի կա, ընկերներով հավաքվել, կանգնել են գրասենյակի դռանը, իրենց հետ է նաեւ մեծ տղա Ռաֆիկը, որի ներկայությամբ չեն ուզում խմել: Հայրիկը անհանգիստ է՝ ինչպե՞ս Ռաֆիկին «ցրեն»: Հովհաննեսը մի խողովակի կտոր է գտնում, տալիս Ռաֆիկին՝ թե վռազ տար արհեստանոց, դարբին Գարեգինին ասա, թող լավ ծեծի, դարձնի քառակուսի ու բեր:

Մինչեւ միամիտ տղան պատվերը կատարում, գալիս է, տեսնում է , որ հոր էլ վրա էլ վիճակ չկա:

***

Հովհաննեսի նախկին աշխատակից Սերգեյ Գալստյանը գյուղում մթերային խանութ է բացել, Հովհաննեսի հերթական այցելության ժամանակ անկեղծորեն պատմում է, որ վերջերս առեւտուր անելիս հաշվարկի մեջ սխալ է թույլ տվել, տուժվել է:

Հովհաննեսն ափսոսում, ջղայնանում է.

- Բա ինչու՞ ուշադիր չես եղել, քո տունն էլ ես քանդել, իմն էլ:

Սերգեյը, թե՝ իմ տունն իրոք քանդել եմ, բա քո տունն ինչու եմ քանդել:

- Բա ինձ էլ ո՞վ նիսյա արաղ կտա:

***

Իր աշխատասենյակում հյուրասիրելու նպատակով Հովհաննեսը հրավիրում է ապարատի աշխատաղներին, դարակից հանում մեկ շիշ կոնյակ, շոկոլադ, բաժակներ, լցնում, առաջին բաժակը ինքն է վերցնում.

- Ես լավ մարդ եմ, թե վատ, դուք գիտեք, դուք ասեք, բայց խնդրում եմ ներողամիտ լինեք, որ երբեմն ջղայնանում, կոպտում եմ, դրա պատճառը բոլորիդ հայտնի է՝ մեր աշխատանքի լարվածությունը, ահավոր ծանրաբեռնվածությունն է: Եթե պետական կարգ ու կանոն, կարգապահություն չլինի, չեք հասցնի:

Խմում են, յուրաքանչյուրը մի խոսք ասում է /Վասիլ Վարդանյան, Սամվել Հակոբյան, Դիմիկ Միքայելյան, Սերգեյ Գալստյան, Վանե Հակոբյան եւ այլն/: Բաժակ է վերցնում նաեւ կառավարիչի տեղակալ, զոլաքարեցի Ջանիբեկ Գալստյանը.

- Հովհաննես ջան, դու խմուգ վախտ լավ մարդ ես, անխմել վախտ՝ մարդ կուտես:

***

Հին ընկերներից մեկը՝ Դավեյ Մադաթը, ասում է.

- Հովհաննես ջան, տելեվիզոր իմ առե, անտենա չկա, կեղնի՞ որ ձեր հիմնարկի արհեստանոցում մի անտենա տաս սարքել, քու մաղարիչ՝ իմ աչքին:

- Ի՞նչ չափսի, Մադաթ ջան

- 3 մետրանոց:

Համաձայնվում են: Գործի վերջում արդեն «լավացած» Հովհաննեսը մտնում է արհեստանոց ու պատվիրում՝ մեկ հատ 6 մետրանոց անտենա: Հաջորդ օրը արդեն պատրաստ բացառիկ չափի անտանան տանում են գյուղ, դժվարությամբ տեղադրում: Արդեն սեղանի շուրջ նստած, Հովհաննեսն ասում է.

- Մադաթ ջան, խմուգ վախտս էր, աչքիս մեկն երկուս էր կերեւեր, անտենան կրկնակի եմ պատվիրել, ներող եղիր:

***

Մի անգամ Եղեգնաձորի շրջանի Գետափ գյուղից Հովհաննեսին հյուր են գալիս Բագրատ եւ Վարսենիկ ամուսինները: Հյուրընկալման վերջին գիշերն է: Հովհաննեսն ու Բագրատը թթի օղիով լավ տաքացել են: Լուսադեմին պետք է մեքենան գա, որ եղածը բարձեն, գնան: Եղեգնաձորցին երեւի ամբողջ կյանքում այդքան չէր խմել, անհագիստ էր՝ ականջը ձայնի: Ու հանկարծ մեքենայի ձայն լսելով՝ շտապ վեր է կենում, տունը խառնում իրար ու դուրս գալիս մեքենային ընդառաջ: Այ քեզ բան, մեքենա չկա, դրսում մութ է: Շփոթված Բագրատը հետ է գալիս տուն, նորից նույն ձայնը, բայց իր տիկնոջ կողմից:

Արթնացած տանեցիները հարցնում են, թե ի՞նչ է պատահել:

-Քեֆը գլխին ծանոթը թե՝ Վարսենիկ խռռալի, ես գիեմ, թե ավտոն դռռալի:

Քնահարամ Ռաֆիկը նեղսրտած ասում է հորը.

- Էդքան որ դու խմցուցիր էս խեղջ մարդուն, կխռռան էլ, կդռռան էլ:

Հավաքեց՝ Դարվին Հովհաննիսյանը

ԳԵՂԱՄԱ աշխարհ
Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 10. 06. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: